ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՐՏԵՐԿՐԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով օտարերկրյա մարդասիրական օգնության ընդունման, փոխադրման եւ պահպանմանն ուղղված աշխատանքների կազմակերպման նպատակներով համակարգված եւ արդյունավետ փոխգործակցության անհրաժեշտությունը,

հաշվի առնելով այդ օգնության կարեւորությունը տնտեսական եւ սոցիալական ոլորտներում ձեւավորված ճգնաժամային իրավիճակի հաղթահարման համար,

նկատի ունենալով աշխատանքի կրկնօրինակման վերացման, նյութական ծախսերի կրճատման եւ օտարերկրյա մարդասիրական օգնության որակի նկատմամբ մատակարարման, ստացման եւ հսկողության բոլոր օղակների գործունեության բարելավման բնագավառում շահագրգռվածությունը,

կարիք ունենալով այդ կապակցությամբ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, մարդասիրական օգնություն ասելով, հասկանում են անհատույց ձեւով օտարերկրյա պետությունների իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից տրամադրվող մթերք, դեղորայք, առաջին անհրաժեշտության ժողովրդական սպառման ապրանքներ, որոնք ինչպես ուղարկողի, այնպես էլ ստացողի կողմից նախատեսված չեն առեւտրային օգուտ ստանալու համար եւ ուղղված են բնակչության կենսապայմանների եւ կենցաղի բարելավման համար:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը կհամաձայնեցնեն իրենց գործողությունները Համագործակցության մասնակիցներ չհանդիսացող պետությունների սահմաններով մարդասիրական օգնության բեռների սահմանահատման հետ կապված հարցերով, ինչպես նաեւ պարտավորվում են Կողմերի միջեւ սահմաններով իրականացնել այդ բեռների անխափան սահմանահատում:

Այդ նպատակներով, ձեւավորված միջազգային պրակտիկային համապատասխան, Կողմերը կապահովեն.

ա) այդ բեռների եւ դրանց ուղեկցող անձանց ազատումը մաքսային տուրքերից, հարկերից եւ վճարներից,

բ) նշված բեռների եւ անձանց արտահերթ սահմանահատման կարգը,

գ) բեռների եւ տրանսպորտային միջոցների առաջնային սպասարկումը եւ պահպանությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը, արդեն գոյություն ունեցող պայմանավորվածություններին համապատասխան, սահմանահատման ժամանակ մարդասիրական օգնության բեռները ուղեկցող, 2-րդ հոդվածում հիշատակված, օտարերկրյա քաղաքացիների համար կապահովեն արտահերթ մուտքի արտոնագրի կարգ:

Կողմերը առաջնային կարգով եւ արտոնյալ սակագներով այդ անձանց կտրամադրեն բնակարաններ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կփոխգործակցեն մարդասիրական օգնության բեռների փոխադրման համար

ցամաքային, օդային եւ ծովային տրանսպորտային միջոցների ժամանակին տրամադրման հարցերում:
Կողմերը կապահովեն հիշատակված տրանսպորտային միջոցների վառելիքով առաջնային մատակարարումը, այդ տրանսպորտային միջոցներին արտահերթ կտրամադրեն կանգառներ, թռիչքային ու վայրէջքային հրապարակներ եւ կառամատույցներ:
Վերոհիշյալ ծառայությունները կտրամադրվեն արտոնյալ սակագներով:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը, փոխադրման եւ պահեստավորման ժամանակ մարդասիրական օգնության բեռների պահպանության համար, կապահովեն ներքին գործերի մարմինների եւ անվտանգության ծառայությունների փոխգործակցությունը:
Կողմերը կուժեղացնեն պայքարը մարդասիրական օգնության բեռների կորստի դեմ:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի 1-ից 5-րդ հոդվածներում շարադրված դրույթների իրականացման մեխանիզմի մշակման նպատակով, Կողմերը կձեւավորեն փորձագետների համատեղ խմբեր, որոնք կգործեն կոլեգիալ հիմունքներով եւ հաշվետու կլինեն Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:
Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահ պետությանը երրորդ վավերագրի հանձնումից հետո: Համաձայնագիրը, ավելի ուշ վավերացրած Կողմերի համար, ուժի մեջ է մտնում իրենց վավերագրերի ի պահ հանձնելու օրը:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերից յուրաքանչյուրը կարող է հրաժարվել սույն Համաձայնագրի դրույթները կատարել՝ ավանդապահ Կառավարությանը ծանուցելու միջոցով: Այդ Կողմի համար Համաձայնագիրը դադարեցնում է գործողությունը ավանդապահ Կառավարության կողմից այդպիսի ծանուցում ստանալու օրվանից վեց ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը, բոլոր նրա Կողմերի համաձայնությամբ, բաց է նրան միանալու համար բոլոր պետությունների կողմից, որոնք կիսում են նրա նպատակները եւ սկզբունքները:

Կատարված է Մինսկ քաղաքում 1993 թվականի հունվարի 22-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 19-ից: